

Վտանգաւոր բան էր կատարւում, մի աւերիչ զգաց-
մունք կամաց-կամաց քանդում էր իմ սիրտը ինչպէս
կրծող որթ, և ես օր-աւուր խամրում, մաս-մաս մեռ-
նում էի հիւանդ բոյսի պէս:

Վճռեցի այլեւս չսպասել պատահականութեան և
շուտով ձգել հեռանալ այս պանսիոնից, ինչ և լինի:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

(Գլ շարունակով)

*
* *

Ես լալ կ'ուզեմ, երգել տխուր ու թափառել
սար ու քար,
Անհուն դարդս մոռանալու ոչ ճար ունիմ, ոչ հնար.
Ու քարեղէն արուն-արցունք սրտիս խորքէն քամեմ,
լամ,
Ու թափառեմ մոլոր-մոլոր ու դազազուած՝ սար
ու քար:

Ա՛խ, աշխարհը անտակ ծով է արտասուների,
արունքի.
Կեանքը ցաւ է, կեանքը՝ տանջանք, մահն է գինը
մեր կեանքի.
Թէ բոյս ու շունչ, թէ մարդ ու հաւք տառապում
են անսահման.
Ու սե դուռն է գերեզմանի միակ ելքը տան-
ջանքի...

Ու աշխարհի վշտերն ամեն իմ վէրքիս պէս
 եմ գրկում,
 ծաւը 'ամեն բոյսի, շնչի մի եղբօր պէս եմ զգում,
 Ու լցւում եմ, հաւաքւում եմ կաթիլ-կաթիլ սրտիս
 մէջ,
 Ուր թափւում է մի շիթ արցունք՝ անապատում թէ-
 ծովում...

Սէրս սրտիս մէջ քարացաւ. դարնան բոյրը
 չեմ զգում.
 Քնքռւշ աղջիկ, հազար ամսո՞ւ քու նազելի աչե-
 րուն.
 Աւազի հատն արեւի տակ քեզնէն աւել գին ունի.
 Դուն կը թռումիս, մոխիր կը ընիս, նա դեռ կ'ապ-
 րի քու հողում:

Ու աշխարհը ինձի համար դառն ծաղրը կը
 թւայ. —
 Վեր կը նայիմ վառ երկնքին, սիրտս խորունկ ցաւ
 կը զգայ.
 — Է՛յ, վառ աստղեր, դուք էսօր կաք, վաղը չը-
 կաք ինձի պէս.
 Այսքան պերճանք, շուք և հմայք՝ ինչո՞ւ համար,
 ինչո՞ւ կայ:

Շատ ցնորքներ, իղձեր ունիս, սիրտդ երկինք
 տենչերի,
 Սիրել կ'ուզես, երգել կ'ուզես, ձգտել բոյրի, արեւի.
 Բայց աշխարհը՝ անխղճմտանք, բայց աշխարհը՝ դե-
 դահիճ՝
 Վայր է գցում, զարնում գետին, հղակոտոր, կէս
 ճամբի:

Ա՛խ, մեր ցաւերն ու տանջանքը էս աշխարհի
 հողսը չէ:

Նրա համար շունչ-արարած կայ՝ թէ՛ չըկայ, պէտ-
քը չէ՛.
Հաղանր-հաղանր դժար դարեր մարդիկ տանջուեեր, մե-
ռեր են.
Ու աշխարհը նըրանց համար մի կաթ արցունք թա-
փել չէ՛:

Ու մի օր էլ ամեն մի շունչ, մարդ ու ծաղիկ,
ամեն բան,
Իրինց դարդերն հետներն առած՝ կը չքանան յա-
ւիտեան.
Բայց աշխարհը միշտ կը մնայ, հչ մահ ունի, հչ
ծնունդ,
Ո՛չ վերջ ունի, հչ էլ ըսկիզբ, ոչ ծայր ունի, հչ
սահման:

Ու իմ աչքիս հղջ աշխարհը ծա՛նր երազ կը
թւայ.
Անմիտ երանգ ու անմիտ խաղ, հըրեշային մի հրաճո՛ք.
Ինչո՞ւ ծնան արեւ, աստղեր, ինչո՞ւ ծնան ու հանգան,
Ինչո՞ւ ծնան մարդ ու տենչեր, սէր ու երգեր ու
սեւ մահ...

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ